«ՖՐԻԴՈՄ ՖԻՆԱՆՍ ԱՐՄԵՆԻԱ» ՍՊԸ
ԳՈՐԾԱՐԱՐ ՀԻՄՆԱԿԱՆ
ՊԱՅՄԱՆՆԵՐ
20 սեպտեմբեր 2022

## 1. ՀԻՄՆԱԿԱՆ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1.1 «Ֆրիդոմ Ֆինանս Արմենիա» ՍՊԸ-ն (այսուհետ «Ընկերություն», «մենք» կամ «մեզ»), Հայաստանի Հանրապետությունում գրանցված և լիցենզավորված (լիցենզիայի համար ՆԸ0021) ներդրումային ընկերություն է, որի գործունեությունը կարգավորվում է «Արժեթղթերի շուկայի մասին» ՀՀ օրենքով, ՀՀ-ում արժեթղթերի շուկան և ներդրումային ընկերությունների գործունեությունը կարգավորող այլ իրավական ակտերով, Ընկերության ներքին կանոնակարգերով:
Մենք լիցենզավորված ենք և վերահսկվում ենք ՀՀ Կենտրոնական բանկի կողմից, որի կողմից տրամադրված լիցենզիայի հիման վրա մենք իրավունք ունենք մատուցել սույն փաստաթղթի 4-րդ կետում նշված ներդրումային ծառայություններ (այսուհետ՝ «Ծառայություններ»):

1.2 Ընկերության ամբողջական Ֆիրմային անվանումն է «Ֆրիդոմ Ֆինանս Արմենիա» ՍՊԸ, պաշտոնական վերկայքն է՝ www.ffin.am, ինչպես նաև Ընկերությանը պատկանող այլ դոմեյններ: Մենք կարող ենք նաև գրանցել ցանկացած լեզվով այլ դոմեյններ՝ մարքեթինգային կամ զարգացման նպատակով: Ընկերության գտնվելու վայրը և փոստային հասցեն է ՀՀ, ք. Երևան 0010, Մելիք-Ադամյան 2/2:

1.3 Սույն փաստաթղթում «Հաճախորդ» հասկացությունն օգտագործելով ի նկատի ունենք Ձեզ, ում Ընկերության կողմից մատուցվում են ներդրումային ծառայությունները: Հաճախորդը ընդունում և գիտակցում է, որ Ընկերության պաշտոնական լեզուն հայերենն է և Հաճախորդը կարող է հղում

FREEDOM FINANCE ARMENIA LLC
GENERAL TERMS OF BUSINESS
September 20, 2022

## 1. GENERAL INFORMATION

1.1. “Freedom Finance Armenia” LLC (hereafter - the “Company”, “we” or “us”) is an investment company registered and licensed in the Republic of Armenia (license number HE0021). We are regulated by the RA "Law on Securities", by other legal acts regulating the securities market and the activities of the investment companies in the Republic of Armenia and by the Company's internal regulations.
We are regulated by the Central Bank of RA under the license number 21. We are authorized to provide investment services and perform investment activities specified in our license and mentioned in point 4 of this document (hereinafter referred to as "Services").

1.2 The business name of the Company is Freedom Broker Armenia and the domain name is www.ffin.am and other domains that are owned by the Company. We may also register and operate other websites mainly for promotional and marketing purposes in any language. The location and postal address of the Company is Republic of Armenia, Yerevan 0010, Melik Adamyan 2/2.

1.3 Using the term "Client" in this document, we mean you, the recipient of the Company’s services. The Client accepts and understands that the official language of the Company is Armenian and the Client should always refer to the documents in Armenian posted on the official website of the Company for all

կատարել Ընկերության պաշտոնական վերկայքում տեղադրված փաստաթղթերին, ստանալ տեղեկություններ Ընկերության և մատուցվող ծառայությունների մասին:

1.4 Հաճախորդի և Ընկերության միջև իրավահարաբերությունները կարգավորվում են Գործարար հիմնական կանոններով (այսուհետ «Հիմնական դրույթներ» կամ «Համաձայնագիր»), որը կարող է ժամանակ առ ժամանակ փոփոխվել սույն Հիմնական դրույթներով սահմանված կարգով: Սույն Համաձայնագիրը միացման պայմանագիր է Հայաստանի Հանրապետության Քաղաքացիական օրենսգրքի 444-րդ հոդվածի իմաստով («Միացման պայմանագիր»): Սույն Համաձայնագիրը հրապարակային առաջարկ (օֆերտա) չէ: Ընկերության և Հաճախորդի («Կողմերի») միջև համագործակցության պայմանները կարգավորվում են Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքով, որի համաձայն Համաձայնագրի ստորագրումը պարտադիր չէ, և Համաձայնագիրն ունի նույն իրավաբանական ուժը և սահմանում է նույն իրավունքները ու պարտականությունները, ինչպես հասարակ գրավոր ձևով կնքված Համաձայնագիրը: Այն դեպքում, երբ Հաճախորդները նախընտրում են ունենալ սույն Համաձայնագրի ստորագրված պատճենը, ապա Հաճախորդը կարող է դրանք տպել, ստորագրել երկու օրինակից և ուղարկել Ընկերությանը՝ նշելով իր փոստային հասցեն: Համաձայնագրի պատշաճ ստորագրված և Ընկերության կողմից կնիքով վավերացված երկրորդ օրինակը կուղարկվի Հաճախորդի կողմից նշված փոստային հասցեին:

1.5 Սույն Համաձայնագիրը հաստատելով՝ Հաճախորդն

information and disclosures about the Company and its activities.

1.4 The legal relationship between the Client and the Company is governed by the General Terms of Business (hereinafter "General Terms" or "Agreement"), which may be amended from time to time in accordance with these General Terms. This Agreement is a joining agreement within the meaning of Article 444 of the Civil Code of the Republic of Armenia ("Joining Agreement"). This Agreement is not a public offer. The terms of cooperation between the Company and the Client ("Parties") are regulated by the Civil Code of the Republic of Armenia, according to which the signing of the Agreement is not mandatory, and the Agreement has the same legal force and defines, the same rights and obligations as the Agreement concluded in ordinary written form. In the event that the Client prefers to have a signed copy of the appendix ½ of this Agreement, then the Client can print the Agreement, sign two copies and send them to the Company, indicating his postal address. A second copy of the Agreement, duly signed and stamped by the Company, will be sent to the postal address specified by the Client.

1.5 By approving this Agreement, the Client unconditionally accepts all the conditions

անվերապահորեն ընդունում է դրանում նշված բոլոր պայմանները և իրավահարաբերության մեջ է մտնում Ընկերության հետ: Սույն Համաձայնագիրը մտնում է ուժի մեջ, երբ Հաճախորդը հաստատում է «Համաձայնագրին միանալու դիմումի ծանուցումը»:

## 2. ՀԱՍԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ

**Մուտքի կոդեր.** Հաճախորդի մուտքի կոդեր, ցանկացած գաղտնաբառեր, Հաճախորդի հաշվի համար, Հաճախորդի էլեկտրոնային մուտքի և էլեկտրոնային առևտրային հարթակ մուտք գործելու համար օգտագործվող կոդեր:

**Տեղաբաշխում.** IPO-ի ընթացքում վաճառված բաժնետոմսերի քանակ: Տեղաբաշխման ժամանակ հնարավոր է բոլոր հայտերը չբավարարվեն կամ բավարարվեն մասնակի: Ընկերությունը որևէ տեղաբաշխման երաշխավորություն չի տալիս:

**Կիրառելի կանոնակարգեր.** ցանկացած համապատասխան կարգավորող մարմնի կանոնները, ցանկացած համապատասխան շուկայի կամ արժեթղթերի բորսայի կանոնները, և բոլոր այլ կիրառելի օրենքները, կանոնները, ընթացակարգեր, ուղեցույցներ, կարգեր, ստանդարտներ և կանոնակարգեր (ներառյալ՝ առանց սահմանափակման, հաշվապահական հաշվառման կանոնները և փողերի լվացման ու ահաբեկչության դեմ պայքարի օրենսդրությունը), որոնք գործում են տվյալ պահին:

**Ակտիվներ.** Դրամական միջոցներ և արժեթղթեր:

**Վաճառք (ներառյալ Վաճառքի գին).** գին, որով Հաճախորդը կարող է գնել Ֆինանսական գործիք:

**Լիազորված անձ.** անձ, ով իրավունք ունի սույն Համաձայնագրի շրջանակներում հանդես գալ Հաճախորդի անունից:

specified in it and enters into a legal relationship with the Company. This Agreement enters into force when the Client confirms the "Notice of Application to join the Agreement".

## 2. DEFINITIONS.

**Access Codes:** The Client's access codes, any login code, password(s), Client Account number, Client's Electronic Authentication Means and any information required for accessing the Electronic Trading Platform and/or the Company's Client portal;

**Allocation:** the number of shares purchased during the IPO and depends on supply and demand. At the time of placement, it is possible that all applications may not be satisfied or partially satisfied. The Company does not guarantee any placement;

**Applicable Regulations:** the rules of any relevant regulatory authority, the rules of any relevant market or security exchange, and all other applicable laws, rules, procedures, guidance, codes, standards and regulations (including, without limitation, accounting rules and anti-money laundering or sanctions legislation) in force from time to time;

**Assets:** Funds and Securities;

**Ask (including "Ask Price"):** the price at which the Client can buy Financial Instruments;

**Authorized Person:** an individual duly authorized on behalf of the Client to act under the present Agreement;

**Հասանելի հաշվի միջոցներ կամ Հասանելի մնացորդ.** միջոցների ընդհանուր ծավալ, որով հնարավոր է իրականացնել գործարքներ և միջոցների դուրս բերում, սակայն չի ներառված գործող պատվերներով սառեցված միջոցները,

**Available Account Funds or Available Balance:** total volume of funds with which it is possible to carry out transactions and withdrawal of funds, but does not include funds frozen by existing orders,

**Հաշվեկշիռ.** Հաճախորդի Ակտիվների հանրագումար՝ չներառած դուրս բերումները, գումարած դրանցից հանած ստացված եկամուտները, որոնք նույնպես հաշվառվում են Առևտրային հաշվում:

**Balance:** the sum of Client's Assets, less withdrawals, plus or minus realized gains and losses and shall also include sums in any Trading Account;

**Հիմնական արժույթ.** Հաճախորդի հաշվի հիմնական արժույթ, որը համարվում է ԱՄՆ դոլարը, եթե չկա այլ պայմանավորվածություն կողմերի միջև:

**Base currency:** the main currency of the Client's Account, respectively USD, unless otherwise agreed in writing between the parties;

**Առք (ներառյալ Առքի գին).** գին, որով Հաճախորդը կարող է վաճառել ֆինանսական գործիքը:

**Bid (including "Bid Price"):** the price at which the Client can sell Financial Instruments;

**Աշխատանքային օր.** բացի շաբաթ կամ կիրակի օրերից ցանկացած օր, որը Ընկերության կամ Ընկերության գործընկերների երկրներում չի համարվում ոչ աշխատանքային օր:

**Business day:** any day other than Saturday or Sunday that is not considered a non-working day in the Company or the Company's partner countries;

**Գնել (ներառյալ Երկարել, Երկար, Երկար դիրք).** առքի պատվեր տալ կամ ձեռք բերել ֆինանսական գործիք:

**Buy (including "Go Long", "Long", "Long Position"):** place a purchase order or purchase a financial instrument;

**Հաճախորդ (ներառյալ Դուք, Ձեր).** ցանկացած ֆիզիկական կամ իրավաբանական անձ, որին Ընկերությունը մատուցում է ծառայություններ:

**Client (including "You", "Your"):** any natural or legal person to whom the Company provides services;

**Հաճախորդի հաշիվ.** Ընկերության կողմից Հաճախորդի համար բացված ցանկացած տեսակի հաշիվ սույն Համաձայնագրի շրջանակներում:

**Client Account (alternatively the "Account"):** any and all Accounts opened by the Company for the Client under these General Terms;

**Հաճախորդի բանկային հաշիվ.** Հաճախորդի անունով բացված բանկային հաշիվ:

**Client's Bank Account:** a bank account opened in the name of the Client;

**Հաճախորդի լիմիտային պատվեր.** Հաճախորդի կողմից գնման կամ վաճառքի լիմիտային գնով կամ դրանից տարբերվող գնով պատվեր:

**Client Limit Order:** An Order from the Client to buy or sell a Financial Instrument at a specified price limit or better and for a specified size;

**Հաճախորդի գումար.** ցանկացած գումար, որը Ընկերությունը ստանում է Հաճախորդից:

**Client Money:** any money that the Company receives from the Client or holds for the Client and/or on the Client's behalf subject to Client Money safeguard provisions in accordance with applicable regulation in the course of, or in the connection with, the Services provided by the Company;

**Փակ դիրք.** Կատարված կամ չեղյալացված պատվեր, որն այլևս ակտիվ չէ:

**Closed Position:** a trade that is no longer active and has been terminated.

**Ընկերության էլեկտրոնային համակարգ.** սահմանված է 10.1 կետով:

**Ընկերություն, «Մենք», «Մեզ»,« Մեր».** «Ֆրիդոմ Ֆինանս Արմենիա» ՍՊԸ, Ներդրումային ընկերություն՝ գրանցված Հայաստանի Հանրապետությունում, որը գործում է Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը համապատասխան, լիցենզավորված է ու վերահսկվում է ՀՀ Կենտրոնական բանկի կողմից:

**Company ("We", "Us", "Our"):** "Freedom Finance Armenia" LLC, an investment company registered in the Republic of Armenia, which operates in accordance with the legislation of the Republic of Armenia, is licensed and controlled by the Central Bank of Armenia;

**Ընկերության վերկայք.** www.ffin.am,

**Company website:** www.ffin.am;

**Պայմանագրի առանձնահատկություններ.** Ընկերության կողմից առաջարկվող յուրաքանչյուր տեսակի ֆինանսական գործիքի և առևտրից պահվող միջնորդավճարների, սակագների, սպրեդների, սվոպների և այլնի մասին տեղեկատվություն, որը տեղադրվում է Ընկերության կողմից առևտրային հարթակում կամ Վերկայքում:

**Contract Specifications:** each type of the Financial Instrument offered by the Company and all necessary trading information regarding fees, commissions, spreads, swaps, margin requirements, etc., that are made available by the Company on the Electronic Trading Platform and/or website;

**ՀՀ ԿԲ կամ ՀՀ Կենտրոնական բանկ.** Հայաստանի Հանրապետության Կենտրոնական բանկ:

**CB or Central Bank:** Central Bank of Armenia, address: 6 Vazgen Sargsyan Street, Yerevan 0010, Armenia, website: www.cba.am

**Կատարման օր.** Աշխատանքային օր, երբ գործարքի կողմերը փոխանցում են գործարքի առարկա դրամական միջոցները կամ ֆինանսական գործիքները:

**Delivery Date:** A Business Day on which either Party shall transfer the Securities to the Account unless otherwise agreed by the Parties;

**E-Account.** Ընկերության անունով Euroclear-ում (Եվրոքլիր) բացված ոչ առևտրային հաշիվ, որտեղ պահառության ծառայությունների մատուցման շրջանակներում կարող են պահվել Հաճախորդի արժեթղթերը:

**E-Account:** a non-trading Account held in the name of the Company for safeguarding the Client`s funds and securities opened with Euroclear;

**Մուտք էլեկտրոնային համակարգ (ՄԷՀ).** Հաճախորդի գրավոր ստորագրության էլեկտրոնային տարբերակ: ՍՄՍ ՄԷՀ, ՎեբԹոքեն և Թոքեն:

**Էլեկտրոնային Առևտրային Համակարգ.** Ընկերության կողմից կառավարվող էլեկտրոնային համակարգ, որի միջոցով Ընկերությունը ծառայություններ է մատուցում Հաճախորդին:

**Կապիտալ.** Հաշվեկշիռ, ներառյալ բաց գործարքների եկամուտը և ծախսը:

**Միջնորդավճարներ.** Ընկերության սակագներով հաստատված միջնորդավճարներ, որոնք կպահվեն Հաճախորդի հաշվից գործարքների ժամանակ: Միջնորդավճարները հաշվարկվում են համաձայն Ընկերության սակագների, որոնք սահմանված են նույնանուն հավելվածով:

**Ֆինանսական գործիքներ.** և/կամ՝

1. **Գործիքներ.** սահմանված է սույն Ընդհանուր դրույթների 4.2 կետով,
2. **Դրամական միջոցներ.** Հաճախորդի գումար, որը

(ա) փոխանցվել է Հաճախորդի բրոքերային հաշվին Գործիքներ գնելու նպատակով և/կամ

(բ) ստացվել է Ընկերության կողմից երրորդ անձանցից, Հաճախորդի պատվերով իրականացված Գործիքի վաճառքից:

**Հիմնական դրույթներ.** սույն Հիմնական դրույթները և կից հավելվածները, ինչպես նաև Ընկերության ներքին իրավական ակտերը, որոնց հիման վրա Ընկերությունը մատուցում է ծառայություններ:

**Հարթակ.** Tradernet առևտրային հարթակ, որը սեփականության իրավունքով պատկանում է Ֆրիդոմ Ֆինանս Եվրոպա (Freedom Finance Europe) ընկերությանը

**Հանձնարարական.** Ներդրումային ծառայությունների մատուցման շրջանակներում Հաճախորդի կողմից

**Electronic Authentication Means (EAM):** the following types of electronic equivalent to Client’s written signature: SMS EAM, Web Token and Token;

**Electronic Trading Platform:** any electronic system operated by the Company, through which the Company provides the Services to the Client;

**Equity:** The Balance, including unrealized profit and/or loss that derives from any open positions;

**Fees:** fees and commissions that the Company will charge the Client for the execution of transactions by the Company pursuant to the Instructions. The Fees shall be calculated in accordance with Appendix 3;

**Financial Instruments:** and/or:

**Instruments:** The Financial Instruments described in paragraph 4.2 of these General Terms;

**Funds:** The Client Money that is:

(i) transferred by the Client to the bank account of the Company for the purpose of purchasing the Investments in accordance with these General Terms; and/or:

(ii) received by the Company from third parties as a result of a sale Transaction of Securities initiated by the Company according to the Client’s Instructions;

**General Terms:** these General Terms and the Appendixes and all Supplementary Documents, as amended from time to time;

**Platform:** “Tradernet” trading platform owned by Freedom Finance Technologies LTD;

**Instructions:** instructions received by the Company from any Authorized Person of the

Ընկերությանը տրված ցուցում, որով սահմանված է.

(ա) Որևէ գործարք կատարելու համար տրված պատվեր, որը պետք է.

1) պատշաճ կերպով լրացված լինի համաձայն սույն Ընդհանուր դրույթների Հավելված 4-ի (եթե այլ ձև համաձայնեցված չէ Ընկերության և Հաճախորդի միջև լրացուցիչ պայմանագրով)
2) պարունակի նվազագույն էական պայմանները, ինչպես նաև լրացուցիչ պայմանները՝ պահանջի դեպքում և
3) հղում պարունակի սույն Համաձայնագրին: Առևտրի կողմերի համաձայնության դեպքում Պատվերը նաև համաձայնություն է արժեթղթերի սեփականության իրավունքի փոխանցում մի կողմից մյուսին:

(բ) Պահառուական ծառայությունների շրջանակում հանձնարարականը Հաճախորդի կողմից պետք է տրվի Հարթակի միջոցով և/կամ գրավոր և/կամ էլեկտրոնային եղանակով՝ Ընկերության էլեկտրոնային հասցեին հանձնարարականը ուղարկելով, որը պետք է պարունակի հետևյալ դրույթները. Թողարկողի անվանում, արժեթղթերի տեսակ, ընդհանուր անվանական արժեք կամ քանակ (եթե անվանական արժեքն անհասանելի է), Արժեթղթերի միջազգային տարբերակիչ ծածկագիրը (ԱՄՏԾ կամ ISIN), փոխանցվող կամ ստացվող արժեթղթերի դասը, փոխանցվող կամ ստացվող գումար, ժամանակահատվածը, որի ընթացքում կատարվելու է փոխանցումը կամ ստացումը, ինչպես նաև կապված այլ տեղեկատվություն, որն անհրաժեշտ կլինի հանձնարարականը կատարելու համար: Հանձնարարականի ձևը սահմանվում է Ընկերության կողմից

Client with respect to the Services, provided that:

(a) For the execution only services, Instructions or Trade Orders shall be given in writing and relate to the purchase or sale of Securities. The Trade Order shall:

(i) be completed substantially in the form set out in Appendix 4 to these General Terms (except to the extent otherwise agreed by the Parties or required by Applicable Regulations);

(ii) contain at a minimum the Material Terms as well as other relevant additional terms, if any, and,

(iii) refer to this Agreement. By agreement of the Parties, the Trade Order may also evidence the transfer of ownership rights from one Party to the other Party in respect of the Securities. In the event of any inconsistency between the provisions of the Trade Order and the provisions of this Agreement, the provisions of the Trade Order shall prevail;

(b) For custodian services, Instructions shall be given in writing/by the Platform/by sending to Company's e-mail and shall at a minimum include the following terms: the Issuer, type of the Securities, total nominal value (or number, if nominal value is not applicable), issuance number and date or ISIN, series of the Securities to be transferred or received, the amount of Funds to be transferred or received, time period during which appropriate operation shall be taken, as well as other relevant additional terms, which shall be included in accordance with the Company's form of the Instruction for custody services and which are necessary to fulfil the Instruction.

պահառուական ծառայությունների մատուցման կանոնակարգով:

**Ծառայություններ.** Սույն Համաձայնագրի 4.1 ենթակետով սահմանված Ընկերության կողմից Հաճախորդին մատուցվող ծառայություններ:

**Թողարկող.** Իր երկրի օրենքով սահմանված կարգով արժեթղթեր թողարկող անձ:

**IPO (Առաջնային հրապարակային առաջարկ).** Ընկերությունների կողմից առաջին անգամ արժեթղթերի տեղաբաշխման գործընթաց՝ հրապարակային առաջարկի միջոցով:

**Օրենք.** «Արժեթղթերի շուկայի մասին» ՀՀ օրենք:

**Համաձայնագրին միանալու դիմումի ձև.** Ընկերության ծառայություններից օգտվելու համար Հաճախորդի կողմից լրացվող, հաստատվող և ներկայացվող դիմումի ձև, որով Հաճախորդը տալիս է իր անվերապահ համաձայնությունը սույն Ընդհանուր դրույթներին, հաստատում է, որ ծանոթացել է Ընկերության ներքին իրավական ակտերին և մտնում է Գործարար հարաբերության մեջ Ընկերության հետ:

**Էական պայմաններ.** Հաճախորդի գործարքի պատվերում նշվող պայմաններ, որոնք առնվազն ներառում են.

- Գործարքի օր,
- Գործարքի ուղղություն (առք կամ վաճառք),
- Հանձնարարական (հաշվից մուտք կամ ելք),
- Թողարկող,
- Արժեթղթերի տեսակ,
- ԱՄՏԾ/ISIN,
- Գործարքի գումար և արժույթ,
- Կատարման օր,
- Կնքման օր,
- Կուտակված տոկոսագումար (եթե առկա է),
- Արժեթղերի գին,

**Services:** the Services to be provided by the Company to the Client as described in paragraph 4.1 of this Agreement;

**Issuer:** any party duly organized and validly existing under the laws of its jurisdiction, which has issued Securities;

**Initial public offering (IPO):** the process where a private company issues new and/or existing security to the public for the first time;

**Law:** the RA "Law on the Securities";

**Application Form to the General Terms:** the document entitled “Application Form to the General Terms which is signed by the Client in order to initiate the offer of Services hereunder;

**Material Terms:** the terms of the Trade Order and any applicable transaction agreed upon by the Parties as the result of receipt by the Company of Instructions from the Client. At a minimum, the Material Terms shall include the following:

- Trade Date;
- Direction of trade (i.e., buy or sell)
- Instruction (i.e., to debit or credit the Account);
- Issuer;
- Type of the Securities;
- ISIN/registration code of the Security
- Payment Amount and currency;
- Delivery Date;
- Value Date;
- Settlement detail if differ from the ordinary market practice on a venue where

- Արժեթղթերի ընդհանուր անվանական արժեք կամ քանակ և/կամ,
- Այլ դրույթներ, եթե նման գործարքի էությունից ելնելով նման դրույթ պահանջվում է:

execution of the Client's Instruction takes place;
• Accrued Interest (if applicable);
• Price of the Securities;
• Total Nominal Value and/or Quantity of the Securities; and/or
• other points, subject to particulars of a transaction if applicable.

**Օգտագործողի տիրույթ.** Ընկերության վերկայքի հատված կամ Ընկերության կողմից տրամադրվող հեռացված տերմինալ կամ Ընկերության ծրագրային հավելված (application), որի միջոցով Հաճախորդը կարող է կապ հաստատել Ընկերության հետ կամ տալ Հանձնարարական կամ պատվեր:

**Member Area:** The Company's website section or a remote terminal provided by the Company or a software application where the Client may communicate with the Company and give Online Instructions and Orders;

**Nasdaq Global Data.** Շուկայական տվյալների շտեմարան, որը հավաքագրվում և մշակվում է Համակարգի կողմից կամ այլ աղբյուրներից և Հաճախորդին հասանելի է դարձնում Նասդաք Ընկերության տվյալներին, որոնք կապված են
(ա) առևտրի ենթակա արժեթղթի կամ այլ ֆինանսական գործիքների, շուկաների, ներդրումային գործիքների, ինդեքսների կամ այլ գործիքների հետ,
(բ) Նասդաք ընկերության գործունեության հետ,
(գ) Նասդաք ընկերության կողմից տրամադրվող այլ տեղեկատվության հետ:

**Nasdaq Global Data:** certain market data and other data disseminated that has been collected, validated, processed and recorded by the System or other sources made available for transmission of data to Client from a Nasdaq Company through a distributor relating to:
a) eligible securities or other financial instruments, markets, products, investment vehicles, indicators or devices;
b) activities of a Nasdaq Company;
c) other information and data from a Nasdaq Company.

**Առցանց Հանձնարարական.** էլեկտրոնային կարգով լրացված և տրամադրված Հանձնարարական:

**Online Instructions:** Instructions received by the Company through electronic systems;

**Բաց դիրք կամ բաց գործարք.** գործարք, որը դեռ փակված չէ հակադիր գործարքով:

**Open Position or Open Transaction:** any established or entered trade that has yet to close with an opposing trade;

**Պատվեր կամ Առևտրի պարտվեր.** Գործարք կնքելու հանձնարարական Ընկերությանը:

**Order and Trade Order:** the request for the execution of a Transaction;

**Գործարքի գումար.** Գործարքի կողմի գործարքը կնքելու համար անհրաժեշտ գումարի չափ, ներառյալ Ընկերության սակագները: Պարտատոմսերի դեպքում՝ ներառյալ կուտակված արժեկտրոնի

**Payment Amount:** the amount to be paid by one Party to the other pursuant to the provisions of this Agreement, including the Company's Fees or by the Company or the

գումար՝ Գործարքի կատարման օրվա դրությամբ:

**Պորտֆել.** Արժեթղթերի և այլ ֆինանսական գործիքների համախումբ, չներառած բոլոր ելքերը:

**Գին.** Արժեթղթի գին արտահայտված ԱՄՆ դոլարով կամ այլ արժույթով կամ որպես տոկոս անվանական արժեքից, որը հասանելի է առևտրային համակարգում, արտաբորսայական շուկայում, և որով հնարավոր է ձեռք բերել, վաճառել մարել արժեթղթերը:

**3. ԾՐՋԱՆԱԿԸ և ԿԻՐԱՌՈՒՄԸ**

3.1 Հաճախորդի կողմից Համաձայնագրին միանալու դիմումի հաստատումը նշանակում է Հաճախորդի համաձայնությունը սույն Հիմնական դրույթներին: Սույն Հիմնական դրույթների դիմումի ձևերը սահմանված են սույն փաստաթղթի Հավելված 1-ով և Հավելված 2-ով, և դրանք լրացնելով ու հաստատելով Հաճախորդը գործարար հարաբերության մեջ է մտնում Ընկերության հետ՝ սկսած դրանց ստորագրման օրվանից:

3.2 Համաձայնագրին միանալու դիմումը հաստատում է անձամբ Հաճախորդը կամ նրա լիազորված անձը, տրամադրված լիազորագրի հիման վրա:

3.3 Սույն Համաձայնագիրը (և սույն Համաձայնագրի ցանկացած փոփոխություն) հանդիսանում է Սույն Համաձայնագրի անբաժանելի մաս և ունի Սույն Համաձայնագրին հավասար իրավաբանական ուժ: Սույն Համաձայնագիրը կարող է փոփոխվել 29-րդ կետով նախատեսված կարգով: Միևնույն ժամանակ՝ այն դեպքում, երբ մինչ սույն Համաձայնագրի կնքումը Հաճախորդն արդեն իսկ ստանձնել է որոշակի պարտավորություններ

Client to a third party in accordance with an Instruction from the Client;

**Portfolio:** Securities and monetary funds, together with all investments and reinvestments made and the proceeds of those monetary funds and investments, and likewise all earnings and profits, excluding all withdrawals held by the Company in the Client's Account from time to time;

**Price:** the price for the Securities in US Dollars or in another currency or as a percentage of their total Nominal Value on the relevant stock exchange, trading system, or over-the-counter market through which the Securities are to be purchased, or sold, or otherwise transferred, or redeemed.

**3. SCOPE AND APPLICATION**

3.1 Conclusion of the Application Form to the General Terms is carried out by accession of the Client to these General Terms. To accede to the terms and conditions of the General Terms the Client and the Company conclude the Application Form to the General Terms in the form stated in Appendix 1 or Appendix 2 of these General Terms, as appropriate. The Agreement between the Client and the Company is deemed concluded from the date of your signing the Application Form to the General Terms.

3.2 The Application Form to the General Terms shall be signed by the Client personally or by its representative acting on the basis of Power of Attorney or other grounds set by legislation in force.

3.3 This Agreement (and any amendment to this Agreement) is an integral part of this Agreement and has the same legal force as this Agreement. This Agreement may be amended in accordance with clause 29. At the same time, in the event that before the conclusion of this Agreement, the Client has already assumed certain obligations towards the Company within the framework of other transactions, then these obligations continue to apply. This Agreement applies only to relations arising after its (this Agreement) signing.

Ընկերության նկատմամբ՝ այլ գործարքների շրջանակներում, ապա տվյալ պարտավորությունները շարունակում են գործել: Սույն Համաձայնագիրը տարածվում է միայն դրա (սույն Համաձայնագրի) ստորագրումից հետո ծագած հարաբերությունների վրա:

3.4. Ընկերությունը ծառայություններ է մատուցում սույն Համաձայնագրի հիման վրա: Համաձայնագրով սահմանված են բոլոր ներդրումային ծառայությունները և դրանց հետ կապված ծառայությունները, որոնք Ընկերությունը մատուցում է Հաճախորդին:

3.5 Սույն Համաձայնագիրը նաև նպատակ ունի օգնել Հաճախորդին ընդունել տեղեկացված ներդրումային որոշումներ. այն տեղեկացնում է, ի թիվս այլնի, Ֆինանսական գործիքներում ներդրումների հետ կապված հիմնական ռիսկերի մասին:

3.6 Հաճախորդի կողմից ակնկալվում է Համաձայնագրին միանալու դիմումը հաստատելուց առաջ կարդալ սույն Համաձայնագիրը:

3.7 Սույն Համաձայնագիրը վերաբերում է պրոֆեսիոնալ և ոչ Պրոֆեսիոնալ Հաճախորդներին: Ընդ որում՝ Ընկերության կողմից Հաճախորդների պրոֆեսիոնալ և ոչ պրոֆեսիոնալ դասակարգումը իրականացվում է ՀՀ Կենտրոնական Բանկի կողմից սահմանված, ինչպես նաև Ընկերության ներքին իրավական ակտերով սահմանված կարգով:

3.4 This Agreement set out the basis on which the Company agrees to provide the Services to you. This Agreement governs all investment services and any related services provided by the Company to you.

3.5 This Agreement is provided to assist the Client in making an informed decision about the Company, its services and the risks of the Financial Instruments covered by the Services.

3.6 This Agreement should be read in its entirety in deciding whether to use the Services of the Company and acquire or to continue to hold any Financial Instrument which is covered by those services

3.7 This Agreement applies to Professional and Non-Professional Clients. In addition, professional and non-professional classification of Clients by the Company is carried out in accordance with the procedure established by the Central Bank of the Republic of Armenia, as well as by the internal legal acts of the Company.

## 4. ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՏՈՒՑՈՒՄ

4.1 Ընկերության կողմից Հաճախորդին մատուցվող ծառայություններն են.

(ա) մեկ կամ մի քանի Ֆինանսական գործիքների վերաբերյալ պատվերների ընդունում և փոխանցում.

(բ) Հաճախորդի հաշվին գործարքների կնքում:

## 4. PROVISION OF SERVICES

4.1 The services provided by the Company to the Client are:

(a) receiving and transmitting orders for one or more Financial Instruments;

(b) Entering into transactions at the Client's expense.

4.2 Ընկերությունը մատուցում է 4.1 ենթակետով սահմանված Ներդրումային հիմնական ծառայությունները և 4.3 ոչ հիմնական ծառայությունները հետևյալ Ֆինանսական գործիքներով.

i. Փոխարկելի արժեթղթեր,
ii. Դրամական շուկայի գործիքներ,
iii. Կոլեկտիվ ներդրումների միավորներ (ներդրումային ֆոնդերի փայեր),
iv. Օպցիոններ, ֆյուչերսներ, սվոպներ, ֆորվարդային տոկոսադրույքի համաձայնագրեր և այլ ածանցյալ գործիքներ՝ կապված արժեթղթերի, արտարժույթի, տոկոսադրույքի, ֆինանսական ինդեքսի հետ:
v. Օպցիոններ, ֆյուչերսներ, սվոպներ, ֆորվարդային տոկոսադրույքի համաձայնագրեր և այլ ածանցյալ գործիքներ՝ կապված ապրանքների հետ:

4.3 Ընկերությունը մատուցում է նաև հետևյալ ոչ հիմնական ծառայությունները.
(ա) ֆինանսական գործքիների պահառություն, ինչպես նաև պահառուական ծառայությունների հետ կապված այլ ծառայություններ՝ համաձայն սույն Համաձայնագրի 14-րդ կետի,
(բ) արտարժույթի փոխարկման ծառայություններ, որոնք կապված են վերը թվարկված ծառայությունների հետ:
4.4 4.1 կետով սահմանված ծառայությունը կարող է ներառել Ֆինանսական գործիքներով փոխանցումներ ոչ Կարգավորվող շուկայում, կամ առևտրի առարկա չլինել որևէ արտարժութային շուկայում:
4.5 Սույն Համաձայնագրի շրջանակներում մատուցվող ծառայությունները չեն ներառում ներդրումային խորհրդատվության տրամադրումը և ըստ այդմ, Ընկերության

4.2 The Company provides the Investment core services defined in sub-clause 4.1 and 4.3 non-core services with the following Financial Instruments:
i. Convertible securities,
ii. Money Market Instruments,
iii. Collective investment units (units of investment funds),
iv. Options, futures, swaps, forward rate agreements and other derivatives related to securities, foreign currency, interest rate, financial index.
v. Options, futures, swaps, forward rate agreements and other derivatives related to commodities.
4.3 The company also provides the following non-basic services:
(a) custody of financial instruments, as well as other services related to custody services in accordance with Clause 14 of this Agreement,
(b) foreign exchange services related to the services listed above.
4.4 The service defined in point 4.1 may include transfers of Financial Instruments in over-the-counter Market, or may not be traded in any foreign exchange market.
4.5 The services provided under this Agreement do not include the provision of investment advice and accordingly, any information provided by the Company to the Client shall not be considered Investment Advice and the Company shall not guarantee any investment of the Client. The Client is personally responsible without limitation for all decisions and transactions made.
4.6 The Company regulates relations with the Client based on the following provisions:
i. These General Terms, including the Appendices,
ii. The application to join the Agreement approved by the client,
4.7 The Client or his authorized person can contact the Company using the following means of communication:
i. via phone,
ii. via mail,
iii. via TraderNet trading platform,
iv. via Electronic system offered by the company.

կողմից Հաճախորդին տրամադրվող ցանկացած տեղեկատվություն չի համարվում Ներդրումային խորհրդատվություն և Ընկերությունը չի երաշխավորում Հաճախորդի որևէ ներդրում: Հաճախորդն առանց սահմանափակման անձամբ է պատասխանատու իր ընդունած բոլոր որոշումների և կատարած բոլոր գործարքների համար:

4.6 Ընկերությունը Հաճախորդի հետ հարաբերությունները կարգավորում է հետևյալ դրույթների հիման վրա.

i. Սույն Հիմնական դրույթները՝ ներառյալ հավելվածները,
ii. Հաճախորդի կողմից հաստատված Համաձայնագրին միանալու դիմումը,

4.7 Ընկերության հետ Հաճախորդը կամ նրա լիազորված անձը կարող են կապ հաստատել հետևյալ կապի միջոցներով.

i. Հեռախոս,
ii. Ֆաքս,
iii. TraderNet առևտրային հարթակ,
iv. Ընկերության կողմից առաջարկվող էլեկտրոնային համակարգ:

## 5. ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆ

5.1 Հաճախորդը անձամբ պատասխանատու է իր ներդրումային որոշումների համար և ընդունում է դրանց հետ կապված բոլոր ռիսկերը: Ընկերությունը չի երաշխավորում ներդրումները որևէ Ֆինանսական գործիքում և Հաճախորդի հետ համապարտ պատասխանատվություն չի կրում Հաճախորդի կրած որևէ վնասի համար: Ընկերությունը կարող է տեղեկացնել Հաճախորդին, եթե գա այն եզրահանգման, որ որևէ Ֆինանսական գործիք կամ ներդրումային ծառայություն չի համապատասխանում Հաճախորդի շահերին:

## 5. RESPONSIBILITY

5.1 The Client is personally responsible for his investment decisions and accepts all risks related to them. The Company does not guarantee investments in any Financial Instrument and is not jointly and severally liable with the Client for any loss suffered by the Client. The Company may notify the Client if it concludes that any Financial Instrument or investment service does not meet the Client's interests.

## 6. ՌԻՍԿԵՐԻ ՄԱՍԻՆ ԶԳՈՒՇԱՑՈՒՄ

6.1 Ֆյուչերսները, օպցիոնները և այլ ածանցյալ գործիքները բարձր

## 6. RISK WARNING

6.1 Futures, options and other derivative products are highly leveraged instruments

լեվերիջային գործիքներ են և ունեն բարձր ռիսկի աստիճան։ Հնարավոր է, որ դրանցով գործարքների կատարման արդյունքում Հաճախորդը կրի մեծ վնասներ կամ կորցնի իր ամբողջ կապիտալը։ Այս գործիքները հարմար չեն բոլոր ներդրողների համար և Հաճախորդը պետք է համոզված լինի, որ ինքը ընդունում է բոլոր ռիսկերը և անհրաժեշտության դեպքում դիմի անկախ փորձագետի օգնությանը։

6.2 Ընկերությունը կարող է հարցման միջոցով տեղեկանալ Հաճախորդի գիտելիքների և փորձի մասին։ Այս գնահատականի հիման վրա Ընկերությունը կարող է Հաճախորդին խորհուրդ տալ՝ ինչ ֆինանսական գործիքներում ներդրումներ կատարել, ըստ Հաճախորդի համար ընդունելի ռիսկի չափանիշների։

6.3 Հաճախորդին (բանավոր, թե գրավոր) տրամադրված ընդհանուր կարծիքները կապված տնտեսական հարցերի, կլիմայի, շուկաների, ներդրումային ռազմավարությունների կամ ներդրումների, առևտրային առաջարկների, հետազոտությունների հետ կամ նման այլ տեղեկությունները չպետք է դիտվեն որպես խորհրդատվություն կամ Ընկերության առաջարկություններ։ Ցանկացած տեղեկություն, որը կարող է Հաճախորդը ստանալ Ընկերությունից, բարեխղճորեն կտրամադրվի զուտ Հաճախորդի տեղեկատվության համար, այն չի համարվում Ընկերության կողմից Հաճախորդին Ներդրումային խորհրդատվության տրամադրում։ Ընկերությունը չի երաշխավորում, որ տրամադրված ցանկացած տեղեկատվությունը ճշգրիտ է կամ ամբողջական, և Ընկերությունը որևէ պատասխանատվություն չի կրում որևէ կորուստի, պարտավորության կամ ծախսի համար, որը Հաճախորդը կարող է կրել՝ հիմնվելով նման

and carry a high degree of risk. It is possible that as a result of the execution of transactions with them, the Client will suffer great losses or lose all his capital. These instruments are not suitable for all investors and the Client should ensure that he accepts all risks and seek the help of an independent expert if necessary.

6.2 The Company may inquire about the Client's knowledge and experience through a survey. Based on this assessment, the Company can advise the Client on which financial instruments to invest in, according to the criteria of acceptable risk for the Client.

6.3 General opinions provided to the Client (oral or written) relating to economic matters, climate, markets, investment strategies or investments, trading proposals, research or other such information shall not be construed as advice or recommendations of the Company. Any information that the Client may obtain from the Company will be provided in good faith for the Client's information only and shall not be deemed to be the provision of Investment Advice by the Company to the Client. The Company does not warrant that any information provided is accurate or complete, and the Company shall not be liable for any loss, liability or expense that the Client may incur in reliance on such information, unless such losses are caused by the Company's fault (the Company's failure to provide the information provision cannot be cited or considered as a circumstance justifying damage to the Client due to the fault of the Company).

6.4 When the Client decides to make a transaction with a Financial Instrument, he accepts and realizes all the risks associated with that Financial Instrument. Among these risks, the main ones are credit risk, market risk, liquidity risk, interest rate risk, foreign exchange risk, business, operational and default risk that may arise in the OTC market. The Client also familiarizes himself with the Company's Risk disclosure notice and the Financial Instrument by which he is going to enter into a transaction.

տեղեկատվության վրա, բացառությամբ եթե նման կորուստներն առաջացել են Ընկերության մեղքով (Ընկերության կողմից տեղեկատվության տրամադրումը չի կարող վկայակոչվել կամ համարվել որպես Ընկերության մեղքով Հաճախորդին վնաս հասցնելը հիմնավորող հանգամանք)։

6.4 Երբ Հաճախորդը որոշում է ընդունում գործարք կատարել Ֆինանսական գործիքով, նա ընդունում է և գիտակցում է այդ Ֆինանսական գործիքի հետ կապված բոլոր ռիսկերը։ Այդ ռիսկերից հիմնականներն են վարկային ռիսկը, շուկայական ռիսկը, իրացվելիության ռիսկը, տոկոսադրույքի ռիսկը, արտարժույթի ռիսկը, բիզնես, գործառնական և չկատարման ռիսկը, որը կարող է առաջանալ արտաբորսայական շուկայում։ Հաճախորդը նաև Ծանոթանում է Ընկերության Ռիսկերի մասին ծանուցմանը և այն Ֆինանսական գործիքին, որով նա պատրաստվում է գործարք կնքել։

6.5 Հաճախորդը նաև ընդունում և գիտակցում է, որ ցանկացած Ֆինանսական գործիքի գին, որում իրականացրել է ներդրում, կարող է աճել, նվազել կամ հավասարվել զրոյի։

6.6 Հաճախոդը հայտարարում է, որ ընդունում է հետևյալը.

i. Ֆինանսական գործիքի մասին նախկին տեղեկությունները չեն երաշխավորում նրա ապագա պահելաձևերը։ Ֆինանսական գործիքի պատմական աճը չի երաշխավորում, որ այն կշարունակի աճել և հակառակը։

ii. Որոշ Ֆինանսական գործիքներ հնարավոր է անմիջապես չդառնան իրացվելի պահանջարկի և առաջարկի բացակայության պատճառով և հնարավոր է՝ Հաճախորդը չկարողանա դրանք վաճառել կամ

6.5 The Client unreservedly acknowledges and accepts that, regardless of any information which may be offered by the Company, the value of any investment in Financial Instruments may fluctuate downwards or upwards and it is even probable that the investment may become of no value. The Client also unreservedly acknowledges and accepts that the price and value of Financial Instruments depends on fluctuations in the financial markets which are outside the Company’s control.

6.6 The Client declares and warrants that he/she has read, understood, and accepts the following:

i. information on the previous performance of a Financial Instrument does not guarantee its current and/or future performance. The use of historical data does not constitute a binding or safe forecast as to the corresponding future performance of the Financial Instruments to which the information refers;

ii. some Financial Instruments may not become immediately liquid as a result e.g. of reduced demand and the Client may not be in a position to sell them or easily obtain information on the value of these Financial Instruments or the extent of the associated risks;

iii. when a Financial Instrument is traded in a currency other than the currency of the Client’s country of residence, any changes in the exchange rates may have a negative effect on its value, price and performance.

iv. the Financial Instrument on foreign markets may entail risks different to the usual risks of the markets in the Client’s country of residence. In some cases, these risks may be greater. The prospect of profit or loss from transactions on foreign markets is also affected by exchange rate fluctuations.

v. a derivative financial instrument may be a non-delivery spot transaction giving an opportunity to make profit or loss on changes in currency rates, commodity or indices.

vi. the value of the derivative financial instrument may be directly affected by the price of the security or any other underlying asset which is the object of the acquisition.

կարողանա վաճառել նախատեսվածից ավելի ցածր գնով:

iii. Իր բնակության երկրից բացի այլ արժույթով գործարքներ կնքելիս արտարժույթի փոխարժեքի տատանումների արդյունքում կարող է կրել լրացուցիչ վնասներ:

iv. Օտարերկրյա շուկաներում գնանշվող ֆինանսական գործիքների հետ կապված ռիսկերը կարող են տարբերվել իր երկրում առկա ռիսկերից : Որոշ դեպքերում ռիսկերը կարող են ունենալ ավելի բարձր մակարդակ:

v. Ածանցյալ գործիքի արժեքն ուղղակիորեն կախված է նրա հիմքում ընկած գործիքի գնից կամ որևէ այլ ակտիվից, որը կարող է տատանվել:

vi. Հաճախորդը ածանցյալ գործիք գնելիս պետք է գիտակցի, որ կարող է կորցնել իր հաշվի բոլոր միջոցները:

6.8 Հաճախորդը գիտակցում է, որ 6-րդ կետով ներկայացված ռիսկերի ցանկը սպառիչ չէ: Հաճախորդը ընդունում և գիտակցում է, որ նա հասկացել է Ընկերության Ռիսկերի մասին ծանուցումը (Հավելված 10), որը ներկայացված էր նրան հաշվի բացման ժամանակ և որը հասանելի է Ընկերության վերկայքում:

vii. the Client must not purchase a derivative financial instrument unless he/she is willing to accept the risk of losing entirely all the money which he/she has invested and also any additional commissions and other expenses incurred.

6.7 The preceding paragraph does not constitute investment advice based on the Client's personal circumstances, nor is it a recommendation to enter into any of this Agreement or invest in any Financial Instrument. Where the Client is unclear as to the meaning of any of the above disclosures or warnings, he/she is strongly recommended to seek independent legal or financial advice.

6.8 The Client acknowledges and accepts that there may be other risks than those mentioned in paragraph 6. The Client acknowledges and accepts that he/she has read and understood Company's Risk Disclosure Notice (Appendix 5) which was provided to him/her during the Account opening process, and which is available on the Company's website.

## 7. ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ ԱՌԵՏՈՒՐ

7.1 Ընկերությունը Հաճախորդին հնարավորություն (մուտքի կոդեր) է տրամադրում ՝ Ընկերությանը ինտերնետ կայքի, Հարթակի կամ էլեկտրոնային այլ միջոցներով (Ընկերության էլեկտրոնային համակարգեր) Հանձնարարականներ ներկայացնելու համար:

7.2 Հաճախորդը մուտք է գործում Ընկերության էլեկտրոնային համակարգեր և տալիս սեփական

## 7. ELECTRONIC TRADING

7.1 The Company provides the Client with an opportunity (access codes) to submit Orders to the Company through the Internet website, Platform or other electronic means (the Company's electronic systems).

7.2 The Client accesses the Company's electronic systems and gives his/her Instructions, provided that the access codes are not transferred to other persons.

7.3 All proprietary rights in the Platform (including intellectual property, all Company

Հանձնարարականները՝ մուտքի կոդերն այլ անձանց չփոխանցելու պայմանով:

7.3 Հարթակի նկատմամբ բոլոր տեսակի սեփականության իրավունքները (ներառյալ, մտավոր սեփականությունը, Ընկերության բոլոր ապրանքային նշանները և Ընկերությանը վերաբերվող կամ առնչվող ֆիրմային անվանումները) պատկանում են Ընկերությանը կամ Ընկերության մատակարարներին և օգտագործվում են Ընկերության կողմից լիցենզիայի հիման վրա: Հաճախորդը չի կարող ունենալ այլ իրավունք կամ շահագրգռվածություն Հարթակի նկատմամբ, բացառությամբ Ընկերության Հարթակ մուտք գործելու և դրա միջոցով տրամադրվող ծառայություններից օգտվելու իրավունքից: Ընկերությունն իրեն իրավունք է վերապահում ցանկացած պահի Հարթակում իրականացնել փոփոխություններ և/կամ փոխարինել Հարթակն այլ հարթակով՝ առանց Հաճախորդի հետ համաձայնեցնելու:

7.4 Հաճախորդը Հարթակից կարող է ներբեռնել ցանկացած տեղեկատվություն միայն սեփական նպատակների համար: Հաճախորդը պետք է վերաբերվի Հարթակի ամբողջ բովանդակությանը որպես գաղտնի և չի կարող վերահրապարակել, տարածել, վերարտադրել կամ բացահայտել Հարթակի որևէ տեղեկություն՝ առանց Ընկերության նախնական գրավոր համաձայնության:

7.5 Ընկերությունն Հարթակում կամ իր ծրագրային հավելվածում ապահովում է Հաճախորդի կողմից Հանձնարարականներ մուտքագրելու հնարավորությունը: Բացի այդ, Ընկերությունը Հարթակի կամ իր ծրագրային հավելվածի միջոցով ժամանակ առ ժամանակ տրամադրելու է արժեթղթերի շուկայի, արժեթղթերի վերաբերյալ տեղեկատվություն, որը կրելու է բացառապես տեղեկատվական

trademarks and trade names relating to or relating to the Company) are owned by the Company or the Company's suppliers and are used by the Company under license. The Client may have no other right or interest in the Platform, except the right to access the Company's Platform and use the services provided through it. The Company reserves the right to make changes to the Platform at any time and/or replace the Platform with another platform without consulting the Client.

7.4 The Client may download any information from the Platform only for his own purposes. Client shall treat all Platform content as confidential and may not republish, distribute, reproduce or disclose any Platform information without Company's prior written consent.

24.2 Ընկերության նկատմամբ որևէ կետանցված պարտավորության առկայության դեպքում Հաճախորդն իրավունք չունի իրականացնել Ընկերությունում պահվող իր միջոցների ելք կամ կատարել որևէ այլ գործողություն, որի արդյունքում Ապահովության ակտիվները կարող են որևէ կերպ ծանրաբեռնվել կամ փոխանցվել, առանց Ընկերության նախնական համաձայնության:

24.3 Ընկերությունը կարող է մարել Հաճախորդի կողմից սույն Համաձայնագրով նախատեսված ցանկացած պարտավորություն Ընկերության նկատմամբ ունեցած

the Company), the Company has the right to lien, hold, sell and/or encumber any and all funds, investment title deeds, certificates and other assets in the Client's accounts, including but not limited to the client's securities ("Security Assets") without the prior consent of the Client.

24.2 In the presence of any stipulated obligation to the Company, the Client has no right to withdraw his funds held by the Company or perform any other action, as a result of which the Security assets may be encumbered or transferred in any way, without the prior consent of the Company.

24.3 The Company may settle any obligation of the Client under this Agreement against any obligation owed to the Company, regardless of the currency of the obligation and the place of payment. If the liabilities are denominated in different currencies, the Company may convert the liabilities at market rates for netting purposes in accordance with its normal business procedures. The Client shall indemnify the Company for any loss, damage, expenses, claims, if they have arisen as a result of the conversion of the Client's funds in the cases specified in this provision.

24.4 All obligations assumed towards the Company are considered to be repaid, if the entire amount stipulated in the obligation has been repaid, including the expenses related to repayment.

ցանկացած պարտավորության դիմաց, անկախ պարտավորության արժույթից և վճարման վայրից: Եթե պարտավորությունները տարբեր են արժույթներով, Ընկերությունը կարող է փոխարկել պարտավորությունները շուկայական փոխարժեքով հաշվանցման նպատակով իր գործունեության սովորական ընթացակարգերի համաձայն: Հաճախորդը փոխհատուցում է Ընկերություն ցանկացած կորստի, վնասի, ծախսերի, պահանջների համար, եթե դրանք առաջացել են Հաճախորդի միջոցների փոխարկման արդյունքում սույն դրույթով սահմանված դեպքերում:

24.4 Ընկերության նկատմամբ ստանձնած բոլոր պարտավորությունները համարվում են մարված, եթե մարվել է պարտավորությամբ ամրագրված ամբողջ գումարը, ներառյալ մարման հետ կապված ծախսերը:

**25. ՊԱՀԱՌՈՒԹՅԱՆ ԴՐՈՒՅԹՆԵՐ**

25.1 Սույն համաձայնագրով սահմանված կարգով Հաճախորդի կողմից ձեռք բերված և փոխանցված Գործիքների (այսուհետ նաև Պահառության գործիքներ) պահառությունն իրականացնում է Ընկերությունը: Արժեթղթերի պահառությունն իրականացնելու նպատակով Ընկերությունը Հաճախորդների համար բացում է հաշիվներ:

25.2 Հաճախորդը սույնով լիազորում է Ընկերությանը Պահառության գործիքները գրանցել կամ կազմակերպել՝ Օրենքով թույլատրված ցանկացած անունով: Սովորաբար Պահառության գործքիները կլինեն անվանատիրոջ հաշվում: Այնուամենայնիվ, եթե Պահառության գործիքները գտնվում են Հայաստանից դուրս գտնվող երկրներում, Ընկերությունը միշտ գործում է

**25. CUSTODY TERMS**

25.1 The Company carries out the custody of the Instruments acquired and transferred by the Client (hereinafter also Custody Instruments) in accordance with the procedure established by this Agreement. In order to carry out the custody of securities, the Company opens accounts for the Clients.

25.2 The Client hereby authorizes the Company to register or arrange the registration of Custody Assets in any name permitted by the Laws. Normally, Custody Assets will be held in the name of an eligible nominee. However, where the Custody Assets are subject to the Laws or market practice outside the Armenia and it is in the Client's best interests to do so, the Company may register or record Custody Assets in the name of the custodian or Company name. If Custody Assets are held in Company name or that of a custodian, the Custody Assets may not be segregated or separately identifiable from Company Assets or those of a custodian and, in the event of a default by the Company or

Հաճախորդի լավագույն շահերից ելնելով: Դա անելու նպատակով Ընկերությունը կարող է գրանցել Պահառուի գործիքները պահառուի անունով կամ Ընկերության անունով: Եթե Պահառության գործիքները պահվում են պահառուի կամ Ընկերության անունով, դրանք հաշվառվում են Ընկերության սեփական գործիքներից առանձին և պաշտպանված են Ընկերության կամ պահառուի սնանկացման դեպքում Ընկերության և պահառուի պարտատերերի որևէ պահանջից:

25.3 Ընկերությունն իր անվանատիրոջ հաշվում հաշվառվող Պահառության գործիքների համար վարում է առանձնացված հաշվառում յուրաքանչյուր Հաճախորդի համար:

25.4 Արժեթղթերի գնման և վաճառքի, ինչպես նաև դրանց հետ կորպորատիվ գործողության հետ կապված ռիսկերի գնահատումը բացառապես Հաճախորդի պարտականությունն է:

25.5 Ընկերությունը Արժեթղթերի հետ կապված որևէ երաշխիք չի տալիս:

25.6 Արժեթղթերի հետ կորպորատիվ գործողությունների մասին ծանուցումներն Ընկերությունը կարող է ստանալ չվերահսկվող աղբյուրներից: Չնայած Ընկերությունը կարող է համարել նման աղբյուրները վստահելի, սակայն պարտավոր չէ ստուգել այդ տեղեկությունների և ծանուցումների իսկությունը, հետևաբար չի երաշխավորում դրանց ճշգրտությունը, ամբողջականությունը կամ ժամանակին տրամադրելը ու Հաճախորդի առաջ պատասխանատվություն չի կրում նման տեղեկությունների ու ծանուցումների հիման վրա կատարված գործողություններից:

25.7 Հաճախորդը ինքնուրույն պետք է հետևի արժեթղթերի հետ կորպորատիվ գործողություններին, ներառյալ,

- Թողարկման պայմաններին,

the custodian, may be not as well protected from any claims by the Company creditors.

25.3 The Company maintains a separate accounting for each Client for Custody instruments registered in the account of its nominee.

25.4 The assessment of the risks associated with the purchase and sale of securities, as well as corporate action with them, is solely the Client's responsibility.

25.5 The Company does not make any guarantees in relation to the Securities.

25.6 The Company may receive notifications of corporate actions with securities from non-controlled sources. Although the Company may consider such sources as reliable, it is not obliged to verify the authenticity of such information and notices, therefore it does not guarantee their accuracy, completeness or timely provision and is not responsible to the Client for actions taken on the basis of such information and notices.

25.7 The client must independently monitor corporate actions with securities, including,

- Release conditions,
- Rewards,
- Securities splits, mergers,
- Capital returns to shareholders,
- On dividend and coupon payment days.

25.8 The company pays the income received from the securities within one business day after their actual receipt.

25.9 Neither we nor the Company's sub-custodians shall be authorized by law to institute proceedings, file a claim or proof of claim in any insolvency proceedings or take any action in connection with the collection or repayment of proceeds.

- Պարգևավճարներին,
- Արժեթղթերի տրոհումներին, միավորումներին,
- Բաժնետերերին կապիտալի վերադարձներին,
- Շահաբաժինների և արժեկտրոնների վճարման օրերին:

25.8 Ընկերությունը վճարում է արժեթղթերից ստացված եկամուտը միայն դրանց փաստացի ստանալուց հետո մեկ աշխատանքային օրվա ընթացքում:

25.9 Ո՛չ մենք, ո՛չ էլ Ընկերության ենթապահառուները իրավասու չեն օրենքով սահմանված կարգով հաստատել վարույթ, ներկայացնել հայց կամ պահանջի ապացույց ցանկացած անվճարունակության վարույթում կամ ձեռնարկել որևէ գործողություն եկամուտների հավաքագրման կամ մարման միջոցների հետ կապված:

## 26. ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ և ՀԱՃԱԽՈՐԴԻ ՄԻՋև ԿԱՊԻ ՄԻՋՈՑՆԵՐ

26.1 Հաճախորդը կարող է Ընկերության հետ հաղորդակցվել գրանցված փոստի, ֆաքսի, էլեկտրոնային փոստի, Հարթակի կամ ծրագրային հավելվածի միջոցով: Գրանցված փոստի, ֆաքսի, էլեկտրոնային փոստի միջոցով Ընկերության հետ փոխանակվող բոլոր հաղորդագրությունները Ընկերության և Հաճախորդի միջև պետք է իրականացվեն «Ընկերության կապի միջոցներ» բաժնում նշված հասցեներով:

26.2 Ընկերությունը Հաճախորդին տեղեկությունները, վերջինիս վերաբերյալ հաշվետվությունները, քաղվածքները և որևէ այլ տեղեկատվություն կարող է փոխանցել թղթային կամ էլեկտրոնային ձևաչափով՝ Հաճախորդի գրանցված էլեկտրոնային հասցեին դրանք ուղարկելու, ինչպես նաև Հարթակով դրանք տրամադրելու միջոցով:

## 26. MEANS OF COMMUNICATION BETWEEN THE COMPANY AND THE CLIENT

26.1 The Client may communicate with the Company by registered mail, e-mail, Platform or software application. All messages exchanged with the Company by registered mail, fax, e-mail between the Company and the Client must be sent to the addresses specified in the "Company's means of communication" section.

26.2 The Company may transfer information, reports, extracts and any other information to the Client in paper or electronic format by sending them to the registered e-mail address of the Client, as well as by providing them through the Platform.

26.3 The Company may also provide information to Client through its official website.

26.4 Company can transmit information in both Armenian and English languages.

26.3 Ընկերությունը կարող է Հաճախորդներին տեղեկություններ տրանադրել նաև իր պաշտոնական վեբկայքի միջոցով:
26.4 Ընկերությունները տեղեկություններ կարող է փոխանցել ինչպես հայերեն, այնպես էլ անգլերեն լեզուներով:

**27. ԳԱՂՏՆԻՈՒԹՅՈՒՆ և ԱՆՁՆԱԿԱՆ ՏՎՅԱԼՆԵՐԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆ**

27.1 Հաճախորդը սույն Համաձայնագիրը կնքելու նպատակով պետք է Ընկերությանը փոխանցի Ընկերության կողմից պահանջված տեղեկությունները, իսկ դրանց փոփոխությունների ժամանակ Ընկերությանը ծանուցի այդ փոփոխությունների մասին և ներկայացնի համապատասխան փաստաթղթերը:
27.2 Ընկերության պարտավորությունն է պաշտպանել Հաճախորդի անձնական տվյալները համաձայն Անձնական տվյալների պաշտպանության մասին ՀՀ օրենքի:
27.3 Ընկերությունը մշակում է Հաճախորդի մասին տվյալները Հաճախորդի հաշվի բացման և Հաճախորդին վերը նշված ծառայությունները մատուցելու նպատակով: Բացառությամբ Օրենքով սահմանված թույտվության, Ընկերությունը օգտագործում է Հաճախորդի անձնական տվյալները միայն Հաճախորդին ծառայություններ մատուցելու ժամանակ անհրաժեշտության դեպքերում:
27.4 Ընկերությունը կարող է բացահայտել Հաճախորդի ներկայացրած կամ իրեն հայտնի դարձած Հաճախորդի մասին տեղեկությունները Ընկերության հետ փոխկապակցված անձանց կամ Ընկերության պարտավորությունների կատարման ժամանակ:
27.5 27.4 կետով սահմանված տեղեկությունները Ընկերությունը չի բացահայտում, եթե համոզված չէ, որ

**27. PRIVACY AND PROTECTION OF PERSONAL DATA**

27.1 In order to sign this Agreement, the Client must provide the Company with the information requested by the Company, and in case of changes, notify the Company about these changes and submit the relevant documents.
27.2 The Company's obligation is to protect the Client's personal data in accordance with the RA Law on Personal Data Protection.
27.3 The Company processes the Client's data for the purpose of opening the Client's account and providing the above services to the Client. Except as permitted by law, the Company uses the Client's personal data only in cases of necessity when providing services to the Client.
27.4 The Company may disclose the information about the Client submitted by the Client or made known to it by persons affiliated with the Company or in the performance of the Company's obligations.
27.5 The Company does not disclose the information specified in clause 27.4, unless it is sure that the persons affiliated with it will not disclose this information to third parties, except for the cases defined by the Applicable Regulations.
27.6 The Client agrees that the Company and its affiliates may:
i. Hold and process information about the Client,
ii. Use the information to manage Client accounts, provide services, monitor Client accounts and detect fraud.
iii. Disclose that information to related parties;
iv. To disclose the information to the suppliers, agents providing services to the Company,

նրա հետ փոխկապակցված անձինք չեն բացահայտի այդ տեղեկությունները երրորդ անձանց, բացառությամբ Կրառելի կանոնակարգերով սահմանված դեպքերի:
27.6 Հաճախորդը համաձայնվում է, որ Ընկերությունը և նրա հետ փոխկապակցված անձինք կարող են.

i. Տիրապետել և մշակել Հաճախորդի մասին տեղեկությունները,
ii. Օգտագործել այս տեղեկությունները Հաճախորդի հաշիվները կառավարելու, ծառայություններ մատուցելու, Հաճախորդի հաշիվը հսկելու և զեղծարարության դեպքերը բացահայտելու համար:
iii. Բացահայտել այդ տեղեկությունները փոխկապակցված անձանց,
iv. Ընկերությանը ծառայություն մատուցող մատակարարներին, գործակալներին,
v. Վերլուծել և օգտագործել տեղեկությունները՝ ի շահ Հաճախորդին: Եթե Հաճախորդը չի ցանկանում, որ այդ տեղեկություններն օգտագործվեն, կարող է տեղեկացնել Ընկերությանը:

27.7 Հաճախորդը տալիս է իր համաձայնությունը առ այն, որ Ընկերության հետ ցանկացած խոսակցություն կարող է ձայնագրվել և պահպանվել և Ընկերությունը կարող է այդ ձայնագրությունները տրամադրել Օրենքով սահմանված դեպքերում: Բոլոր Պատվերները, Հանձնարարականները պահվում են Ընկերության Էլեկտրոնային համակարգում:
27.8 Բոլոր ձայնագրությունները Ընկերության անձնական սեփականությունն են և կարող են կիրառվել իրավական գործընթացներում:

v. Analyze and use information for the benefit of the Client. If the Client does not want the information to be used, he/she has to inform the Company.
27.7 The Client agrees that any conversation with the Company may be recorded and stored and the Company may provide these recordings in cases defined by Law. All Orders, Instructions are stored in the Company's Electronic System.
27.8 All recordings are the personal property of the Company and may be used in legal proceedings.
27.9 The Company treats the Client's information as confidential and uses its tools to prevent third parties from accessing it.
27.10 The Client is aware that the Company's Privacy Policy is posted on the Company's website.

27.9 Ընկերությունը վերաբերվում է Հաճախորդի մասին տեղեկություններին որպես գաղտնի և կիրառում իր գործիքակազմը երրորդ անձանց դրանց հասանելիությանը կանխելու համար:
27.10 Հաճախորդը տեղյակ է, որ Ընկերության Գաղտնիության քաղաքականությունը տեղադրված է Ընկերության կայքէջում:

## 28. ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ

28.1 Սույն Համաձայնագիրը կարող է փոփոխվել Ընկերության կողմից միակողմանիորեն՝ հաջորդ կետում նշված ժամկետներում և պայմաններով: Փոփոխությունները սովորաբար կատարվում են հետևյալ հանգամանքներում.

i. Եթե նման փոփոխությունն անհրաժեշտ է օրենսդրական փոփոխության հետևանքով,
ii. Ընկերության գնահատմամբ տվյալ փոփոխությունն անհրաժեշտ է գործարար հարաբերությունն ավելի նպատակահարմար դարձնելու համար:

28.2 Փոփոխություններն ուժի մեջ կմտնեն՝

- Եթե փոփոխությունները կատարվել են 28.1(i) կետի հիման վրա՝ Պաշտոնական հրապարակումից 1 (մեկ) աշխատանքային օր հետո,
- Եթե փոփոխությունները կատարվել են 28.1(ii) կետի հիման վրա՝ Պաշտոնական հրապարակումից 5 (հինգ) աշխատանքային օր հետո,

Ընկերությունը Հաճախորդին կտեղեկացնի կատարված փոփոխությունների մասին էլեկտրոնային փոստի կամ Հարթակի միջոցով կամ տեղադրելով իր Վեբկայքում:

## 28. AMENDMENTS

28.1 This Agreement may be amended by the Company unilaterally, within the terms and conditions specified in the next clause. Amendments are usually made under the following circumstances:
i. If such change is necessary as a result of a legislative change,
ii. According to the company's assessment, this change is necessary to make the business relationship more appropriate.
28.2 Amendments will come into force:
• If changes are made based on clause 28.1(i), 1 (one) business day after the Official Publication,
• If changes are made based on clause 28.1(ii), after 5 (five) business days after the Official Publication,
The Company should inform the Client about the changes made through e-mail or the Platform or posting on its Website.

## 29.ԳՈՐԾՈՂՈՒԹՅԱՆ ԺԱՄԿԵՏ և ԴԱԴԱՐԵՑՈՒՄ

29.1 Սույն Համաձայնագիրը մտնում է ուժի մեջ Հաճախորդի կողմից ստորագրելու պահից (ընդ որում Հաճախորդի կողմից ստորագրումը տեղի է ունենում «Հաստատում եմ» կոճակը նշելու միջոցով) և գործում է մինչև կողմերից որևէ մեկի, կամ երկկողմանի համաձայնությամբ դադարեցնելու պահը: Սույն Համաձայնագիրը կարող է դադարեցվել Ընկերության կամ Հաճախորդի նախաձեռնությամբ՝ **Հաճախորդի** կողմից հաշվի փակման հատուկ ցուցումով կամ **Ընկերության** կողմից 10 (տասը) աշխատանքային օր առաջ տրված գրավոր ցուցումով: Համաձայնագիրը դադարեցվում է տվյալ պահին առկա Պատվերներով համապատասխան բոլոր փոխանցումները կատարելուց, ինչպես նաև Ընկերության մոտ պահվող Հաճախորդի դրամական միջոցները վերջինիս հաշվեհամարին փոխանցելուց հետո: Համաձայնագրի դադարեցման դեպքում Բոլոր բաց դիրքերը փակվում են, բոլոր գործարքների հնարավորությունները փակվում են:

29.2 Համաձայնագրի դադարեցման դեպքում փակվում է Հաճախորդի մուտքի հնարավորությունը Ընկերության էլեկտրոնային համակարգին, առանց Հաճախորդի համաձայնության:

29.3 Ընկերությունը կարող է անմիջապես դադարեցնել սույն Համաձայնագիր հետևյալ դեպքերում.

i. Հաճախորդի վախճան,
ii. Հաճախորդի սնանկ ճանաչում,
iii. նման դադարեցումը պահանջվում է որևէ իրավասու կարգավորող մարմնի կողմից կամ դատարանի վճռով,
iv. Հաճախորդի կողմից սույն Համաձայնագրի դրույթների խախտում,

## 29. TERM AND TERMINATION

29.1 This Agreement enters into force from the moment of signing by the Client (while the signing by the Client takes place by ticking the "I confirm" button) and is valid until the moment of termination by either of the parties or by mutual agreement. This Agreement may be terminated at the initiative of the Company or the Client, with a special instruction to close the account by the Client or by a written instruction given by the Company 10 (ten) business days in advance. The Agreement is terminated after making all the transfers according to the Orders available at the moment, as well as after transferring the Clients's funds kept by the Company to the latter's account. In case of termination of the Agreement, all open positions are closed, all transaction opportunities are closed.

29.2 In the event of termination of the Agreement, the Client's access to the Company's Electronic System is closed without the Client's consent.

29.3 The Company may immediately terminate this Agreement in the following cases:

i. Death of the Client,
ii. Bankruptcy of the Client,
iii. such termination is required by any competent regulatory authority or court order;
iv. Violation of the provisions of this Agreement by the Client,
v. Directly or indirectly involving the Client in any fraud,
vi. The Company has reasonable suspicions that the Client's actions are causing damage to the Company or the Company's Electronic System,
vii. The Client has refused to provide the information and/or documents requested by the Company,
viii. The Client has shown a disrespectful attitude towards the Company's employees,
ix. The Client provided incorrect, unreliable information.

29.4 The termination of this Agreement does not affect the rights of the Company, on the

v. Հաճախորդի ուղղակի կամ անուղղակի ներգրավում որևէ զեղծարարության մեջ,
vi. Ընկերությունն ունի հիմնավոր կասկածներ, որ Հաճախորդի գործողությունները վնաս են հասցնում Ընկերությանը կամ Ընկերության էլեկտրոնային համակարգին,
vii. Հաճախորդը հրաժարվել է ներկայացնել Ընկերության պահանջված տեղեկությունները և/կամ փաստաթղթերը,
viii. Հաճախորդը ոչ հարգալից վերաբերմունք է ցույց տվել Ընկերության աշխատակիցների հանդեպ,
ix. Հաճախորդը ներկայացրել է սխալ, ոչ արժանահավատ տեղեկություններ:

29.4 Սույն Համաձայնագրի դադարեցումը ոչ մի դեպքում չի ազդում այն իրավունքների վրա, որոնց հիման վրա առկա է պայմանագրային որևէ բնույթի պարտավորություն, որը ենթադրում է Հաճախորդի կողմից վճարման կատարում՝ սույն Համաձայնագրի դադարեցման դեպքում, այդ թվում.
i. Ցանկացած միջնորդավճար, ներառյալ հաշվի փակման միջնորդավճարը և այլ գումար,
ii. Ցանկացած ծախս, որն առաջացել է հաշվի փակման գործընթացում,
iii. Ընկերությունն իրավունք ունի գանձել վերոնշյալ գումարները Հաճախորդի հաշվից:

29.5 Մինչև սույն Համաձայնագրի դադարեցումը Հաճախորդը պետք է փոխանցի իր Գործիքները այլ պահառուի մոտ բացված հաշվին:

## 30. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

30.1 Հաճախորդը ընդունում է, որ իրեն որևէ այլ անձ չի դրդել կամ ստիպել ստորագրել սույն Համաձայնագիրը:

basis of which there is an obligation of any contractual nature, which implies payment by the Client, including:
i. Any fees, including account closing fees and other fees,
ii. Any costs incurred during the account closing process,
iii. The Company has the right to charge the above fees from the Client's account.

29.5 Prior to the termination of this Agreement, the Client shall transfer its Instruments to an account opened with another custodian.

## 30. GENERAL PROVISIONS

30.2 Հաճապորդն իրավունք չունի փոխանցել սույն Համաձայնագրով իր իրավունքները և/կամ պարտավորությունները որևէ երրորդ անձի առանց Ընկերության նախնական համաձայնության։

30.3 Եթե Հաճախորդը բաղկացած է մեկից ավելի անձանցից, ապա այդ անձինք սույն Համաձայնագրով համապարտ պատասխանատվություն են կրում։ Այդ անձանցից որևէ մեկի կամ մի քանիսի մահվան, սնանկացման կամ լուծարման դեպքում սույն Համաձայնագրով մյուս անձանց պարտավորությունները կշարունակվեն ամբողջ ուժով։ Սույն Համաձայնագրում ցանկացած հղում Հաճախորդին նշանակում է հղում այդ անձանցից մեկին կամ մի քանիսին։ Հաճախորդի անձանցից որևէ մեկին տրված նախազգուշացումը կամ ծանուցումը համարվում է տրված այդ Հաճախորդի բոլոր անձանց։ Հաճախորդի կողմից տրված ցանկացած Հանձնարարական համարվում է տրված այդ Հաճախորդի բոլոր անձանց կողմից։

30.4 Չհակասելով որևէ այլ իրավական կարգավորման, Ընկերությունն իրավունք ունի ցանկացած ժամանակ Հաճախորդի հաշվից գանձել անցյալ, ներկա և ապագա պարտավորությունների գումարները՝ առանց Հաճախորդի նախնական համաձայնության և վերջինիս ծանուցելու։

30.5 Սույն Համաձայնագիրը և բոլոր Գործարքները չեն կարող հակասել Կիրառելի կանոնակարգերին, ինչպես նաև.

i. Եթե կա որևէ անհամապատասխանություն սույն Համաձայնագրի և կիրառելի օրենսդրության միջև, ապա վերջինս ունի գերակայություն,
ii. Սույն Համաձայնագրով չի կարող սահմանվել Հաճախորդների որևէ իրավունքի սահմանափակում,

30.1 The Client acknowledges that he/she has not been incited or forced by any other person to sign this Agreement.

30.2 The Client has no right to transfer its rights and/or obligations under this Agreement to any third party without the prior consent of the Company.

30.3 If the Client is more than one person, these persons are jointly and severally liable under this Agreement. In the event of the death, bankruptcy or dissolution of one or more of those persons, the obligations of the other persons under this Agreement shall continue in full force and effect. Any reference in this Agreement to Client means a reference to one or more of those persons. A warning or notice given to any person of the Client shall be deemed to have been given to all persons of that Client. Any order given by a Client shall be deemed to have been given by all persons of that Client.

30.4 Without contradicting any other legal regulations, the Company has the right to charge the amounts of past, present and future obligations from the Client's account at any time without prior consent and notification of the Client.

30.5 This Agreement and all Transactions shall not contradict with Applicable Regulations, and:

iv. If there is any inconsistency between this Agreement and applicable law, the latter is prevail.
v. This Agreement will not restrict any of the Client's rights, the limitation of which is prohibited by applicable law,
vi. The Company will review this Agreement from time to time to ensure its compliance with applicable law.

30.6 The Company provides information about the transactions and movements made on the Client's account through the Trading System.

30.7 The Client undertakes to execute all obligations to the Company in case of termination of this Agreement.

30.8 Information about the location of the Company, the Company's means of

որի սահմանափակումն արգելվում է կիրառելի օրենսդրությամբ,

iii. Ընկերությունը ժամանակ առ ժամանակ կվերանայի սույն Համաձայնագիրը՝ ապահովելու համար կիրառելի օրենսդրությանը դրա համապատասխանությունը:

30.6 Ընկերությունը Հաճախորդի հաշվով կատարված գործարքների և շարժի մասին տեղեկությունները տրամադրում է Առևտրային համակարգի միջոցով:

30.7 Հաճախորդը պարտավորվում է սույն Համաձայնագիրը դադարեցնելու դեպքում կատարել Ընկերության առաջ ստանձնած բոլոր պարտավորությունները:

30.8 Ընկերության գտնվելու վայրի, Ընկերության Կապի Միջոցների և գործունեության մասին տեղեկությունները հասանելի են Ընկերության վեբկայքում:

**31. ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑԻՉՆԵՐ, ԵՐԱՇԽԻՔՆԵՐ և ՊԱՅՄԱՆԱԳՐԵՐ**

Շարունակական հիմունքներով Հաճախորդը երաշխավորում է, որ.

i. Իրավունք ունի միանալ սույն Համաձայնագրին, կնքել ցանկացած գործարք, որոնք կարող են կատարվել սույն Համաձայնագրի շրջանակներում,

ii. Լրացել է նրա 18 տարին, իր երկրի օրենսդրության և իրավական ակտերի համաձայն չունի որևէ սահմանափակում սույն Համաձայնագրով սահմանված գործարար հարաբերության մեջ մտնելու համար: Նման սահմանափակում առաջանալու դեպքում պարտավորվում է անմիջապես տեղյակ պահել Ընկերությանը:

iii. Ընկերությանը ներկայացրած ցանկացած տեղեկություն և

communication and activities are available on the Company's website.

**31. REPRESENTATIONS, WARRANTIES AND AGREEMENTS**

On an ongoing basis, the Client warrants that:

xiii. Has the right to sign this Agreement, enter into any transactions that may be performed within the framework of this Agreement,

xiv. He is 18 years old and more, according to the legislation and legal acts of his country, he does not have any restrictions to enter into the business relationship defined by this Agreement. In the upon of such a restriction, the Company shall be immediately informed.

xv. Any information and documents submitted to the Company are accurate, complete and valid.

xvi. Any funds transferred by the Company are the property of the Client, are not

փաստաթուղթ ճշգրիտ է, ամբողջական և վավեր:

iv. Ընկերության փոխանցված ցանկացած միջոց Հաճախորդի սեփականությունն է, ծանրաբեռնված չէ որևէ պարտավորությամբ, գրավի առարկա չէ, չի հանդիսանում ուղղակիորեն կամ անուղղակիորեն ապօրինի ճանապարհով ձեռք բերված գույք:

v. Գործում է իր անունից և ոչ որպես որևէ մեկի ներկայացուցիչ կամ հոգաբարձու, եթե Հաճախորդն Ընկերությանը չի ներկայացրել լիազորագիր և իրավունք տվել որևէ երրորդ անձի գործել իր անունից:

vi. Իր որևէ գործողություն չի հակասի սույն Համաձայնագրին և/կամ չի խախտի երրորդ անձանց իրավունքները:

vii. Սույն Համաձայնագրի շրջանակներում իր կողմից իրականացված ցանկացած գործողություն չի հակասի Կիրառելի օրենսդրությանը:

viii. Ցանկացած գործողություն իրականացնելիս տեղյակ է դրա հետ կապված ռիսկերի մասին և ընդունում է այդ ռիսկերը:

ix. Ունի կանոնավոր մուտք դեպի համացանց, ժամանակ առ ժամանակ հետևելու է Ընկերության վեբկայքի նորություններին, սակագների, Համաձայնագրի փոփոխություններին, դրանց հետ չհամաձայնվելու դեպքում տեղեկացնելու է Ընկերությանը:

x. Իր նկատմամբ հարուցված չէ և/կամ չի ընթանում սնանկության վարույթ, կամ նմանատիպ որևէ գործընթաց:

xi. Կարդացել է սույն Համաձայնագրի և կից

encumbered by any obligation, are not subject to collateral, are not directly or indirectly illegally acquired property.

xvii. Acts on his own behalf and not as someone else's representative or trustee, if the Client has not submitted a power of attorney to the Company and authorized any third party to act on his behalf.

xviii. Any of its actions will not contradict this Agreement and/or will not violate the rights of third parties.

xix. Any action taken by it under this Agreement will not be contradict to Applicable Law.

xx. When performing any action, he is aware of the risks associated with it and accepts those risks.

xxi. He has regular access to the Internet, from time to time he will follow the news of the Company's website, changes in tariffs, the Agreement, if he does not agree with them, he will inform the Company.

xxii. He has not been initiated and/or is not in bankruptcy proceedings, or any similar process.

xxiii. He has read all provisions of this Agreement and attached annexes, got acquainted himself with the information posted on the Company's website.

xxiv. The Company is not responsible for the losses incurred as a result of transactions, except if they were caused by the fault of the Company.

հավելվածների բոլոր դրույթները, ծանոթացել է Ընկերության վեբկայքում տեղադրված տեղեկատվությանը:

xii. Գործարքների արդյունքում կրած կորուստների համար Ընկերությունը պատասխանատվություն չի կրում, բացառությամբ, եթե դրանք առաջացել են Ընկերության մեղքով:

**32. ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ**

32.1 Ընկերությունը պատասխանատվություն է կրում Հաճախորդի վնասների համար, որոնք առաջացել են Ընկերության մեղքով և սույն Համաձայնագրում սահմանված պարտականությունները չկատարելու արդյունքում:

32.2 Ընկերությունը պատասխանատվություն չի կրում որևէ կորստի, պարտավորության կամ ծախսի համար, որը կարող է կրել կամ առաջանալ Հաճախորդի մոտ որևէ երրորդ կողմի անփութության, դիտավորյալ չկատարման կամ խարդախության հետևանքով (ներառյալ ցանկացած բրոքեր, բանկ, գործակալ, պահառու, ներդրումային բորսա, դեպոզիտարիա կամ քլիրինգային տուն, էլեկտրոնային վճարումների մատակարար:

32.3 Ընկերությունը պատասխանատվություն չի կրում Հաճախորդի այն վնասների համար, որոնք կարող են առաջանալ երրորդ անձանց կողմից խաբեության հետևանքով, բացառությամբ այն դեպքերի, երբ այդ արարքն առաջացել է Ընկերության դիտավորյալ բացթողումների և անգործությունների հետևանքով:

32.4 Ընկերությունը պատասխանատվություն չի կրում Հաճախորդի հաշիվները սպասարկող

**32. LIABILITY**

32.1 The Company shall bear responsibility for the Client's damages caused by the Company's fault and as a result of non-fulfilment of the obligations set forth in this Agreement.

32.2 The Company shall not be liable for any loss, liability or expense incurred or incurred by the Client as a result of the negligence, willful default or fraud of any third party (including any broker, bank, agent, custodian, investment exchange, depository or clearing house, electronic payments provider).

32.3 The Company is not responsible for the losses of the Client that may occur as a result of fraud by third parties, except for the cases when this act was caused by the intentional omissions and inactions of the Company.

32.4 The Company is not responsible for the losses incurred by the Client due to the negligence, omissions, fraud and bankruptcy of the bank servicing the Client's accounts.

32.5 The Client assures that he will immediately inform the Company about possible frauds by third parties within the framework of this Agreement. The Company is obliged to use its tools to protect the Client from such frauds.

32.6 This Agreement shall not exclude or restrict any liability of the Company unless such exclusion or restriction is prohibited by law.

բանկի անփութության, բացթողումների, խարդախության և սնանկության պատճառով Հաճախորդի կրած վնասների համար:
32.5 Հաճախորդը հավաստիցնում է, որ երրորդ անձանց կողմից սույն Համաձայնագրի շրջանակներում հնարավոր խարդախությունների մասին անմիջապես կտեղեկացնի Ընկերությանը: Ընկերությունը պարտավոր է կիրառել իր գործիքակազմը նման խարդախություններից Հաճախորդին զերծ պահելու համար:
32.6 Սույն Համաձայնագրով չի կարող բացառվել կամ սահմանափակվել Ընկերության որևէ պարտավորություն, եթե այդպիսի բացառումը կամ սահմանափակումն արգելված է օրենքով:

**33. ՀԱՏՈՒՑՈՒՄ**

Շարունակական հիմքերով Հաճախորդը պետք է հատուցի Ընկերության ցանկացած վնաս, որոնք առաջացել են սույն Համաձայնագրի շրջանակներում Հաճախորդին մատուցված ծառայությունների ժամանակ, ներառյալ, բայց ոչ սահմանափակված.

i. ցանկացած Հանձնարարականի հիման վրա գործելու արդյունքում, որն Ընկերությունը ողջամտորեն հաստատել է և տրվել է Հաճախորդի կողմից կամ անունից, կամ
ii. առաջացել են Հաճախորդի կողմից սույն Համաձայնագրի որևէ դրույթի խախտման արդյունքում:

**34. ՖՈՐՍ ՄԱԺՈՐ**

34.1 Ընկերությունը կարող է չկատարել իր պարտականությունները Հաճախորդի նկատմամբ անհաղթահարելի ուժի առաջացման պայմաններում, ներառյալ, բայց չսահմանափակվելով.

i. բնական աղետներ, պատերազմ, հրդեհ, սով, պայթյուններ,

**33. INDEMNITY**

On an ongoing basis, the Client shall indemnify the Company for any damages incurred in the course of providing services to Client under this Agreement, including but not limited:

iii. as a result of acting on any Instruction which the Company has reasonably approved and given by or on behalf of the Client, or
iv. caused by the Client's breach of any provision of this Agreement.

**34. FORCE MAJEURE**

34:1 The Company may not fulfill its obligations to the Client in the event of force majeure, including but not limited to:

գործադուլներ, այլ արդյունաբերական վեճեր:
ii. էլեկտրամատակարարման ցանկացած խափանում, կապի կամ համակարգչային սարքավորումների խափանում:
iii. հաքերային հարձակումներ կամ Ընկերության Էլեկտրոնային համակարգի դեմ անօրինական այլ գործողություններ:
iv. փոստային կամ արդյունաբերական այլ գործադուլներ:
v. որևէ շուկայի դադարեցում, կասեցում կամ փակում և որևէ շուկայում հատուկ սահմանափակումների կիրառումներ:
vi. մատակարար ընկերության, քլիրինգային կենտրոնի կամ բրոքերի կողմից իր պարտավորություններից հրաժարում:

34.2 Երբ նման իրադարձություն է տեղի ունենում, Ընկերությունը որոշում է ընդունում Ֆորս Մաժորային իրավիճակի եղելության վերաբերյալ և Ընկերությունը կարող է, առանց Հաճախորդին նախապես տեղյակ պահելու, իրադարձությունը տեղի ունենալուց հետո ցանկացած ժամանակ իրականացնել հետևյալ գործողությունները.

i. փակել Հաճախորդների բոլոր կամ ցանկացած բաց դիրք:
ii. սառեցնել կամ կասեցնել սույն Համաձայնագրի որևէ կամ բոլոր դրույթները, որոնք ֆորսմաժորային իրավիճակից ելնելով հնարավոր չէ իրականացնել:
iii. կասեցնել կամ դադարեցնել սույն Համաձայնագրով ցանկացած կամ բոլոր ծառայությունների մատուցումը:

vii. natural disasters, war, fire, famine, explosions, strikes, other industrial cases.
viii. any power failure, communication or computer equipment failure.
ix. hacking attacks or other illegal actions against the Company's Electronic System.
x. postal or other industrial strikes.
xi. termination, suspension or closure of any market and the application of special restrictions on any market.
xii. waiver of its obligations by the provider company, clearing house or broker.

34.2 When such an event occurs, the Company shall make a determination as to the existence of a Force Majeure situation and the Company may, without prior notice to the Client, take the following actions at any time after the occurrence of the event:

v. close all or any open positions of Clients.
vi. freeze or suspend any or all provisions of this Agreement that cannot be implemented due to force majeure.
vii. suspend or terminate the provision of any or all services under this Agreement.
viii. to carry out other actions that will allow to protect the interests of the Client, the Company and its suppliers.

iv. իրականացնել այլ գործողություններ, որոնք թույլ կտան պաշտպանելու Հաճախորդի, Ընկերության և նրա մատակարարների շահերը:

**35. ԿԻՐԱՌՎՈՂ ՕՐԵՆՍԴՐՈՒԹՅՈՒՆ և ՎԵՃԵՐԻ ԼՈՒԾՈՒՄ**

35.1 Ընկերության և Հաճախորդի միջև սույն Համաձայնագիրը և բոլոր գործողությունները կարգավորվում են ՀՀ օրենսդրության համապատասխան: Ընկերության և Հաճախորդի միջև ծագած բոլոր վեճերը և անհամաձայնությունները կարող են լուծվել դատական կարգով: Սույն Համաձայնագրի կապակցությամբ ծագող բոլոր վեճերը, տարաձայնությունները և (կամ) պահանջները, ներառյալ՝ դրանց կատարմանը, խախտմանը, դադարեցմանը կամ անվավերությանը վերաբերող, ենթակա են կարգավորման (այսուհետ միասին նաև՝ «Վեճ»)՝ Կողմերի միջև բանակցությունների և խորհրդակցությունների ճանապարհով: Համաձայնության չգալու դեպքում բոլոր Վեճերի լուծումը, բացառելով ընդհանուր իրավասության դատարանների ենթակայությունը, հանձնվում է «Օպտիմուս Լեքս» ՍՊ Ընկերության մշտապես գործող Արբիտրաժային դատարանին (այսուհետ նաև՝ «Արբիտրաժային Դատարան»): Արբիտրաժային Դատարանում գործի քննությունը իրականացվելու է «Առևտրային արբիտրաժի մասին» ՀՀ օրենքին և Արբիտրաժային Դատարանի կանոնակարգին համապատասխան: Կողմերը հավաստիացնում են, որ տեղեկացված են Արբիտրաժային Դատարանում գործերի քննության ընթացակարգին: Արբիտրաժային Դատարանի կանոնակարգը տեղակայված է Ընկերության պաշտոնական ինտերնետային www.optimuslex.am կայքում: Կողմերը սահմանում են, որ Արբիտրաժային

**35. GOVERNING LAW AND DISPUTE RESOLUTION**

35.1 This Agreement and all actions between the Company and the Client are governed by RA legislation. All disputes and disagreements between the Company and the Client can be resolved by court. All disputes, disagreements and (or) claims arising in connection with this Agreement, including those related to their performance, violation, termination or invalidity, are subject to settlement (hereinafter referred to as "Dispute") through negotiations and consultations between the Parties. In the event of failure to reach an agreement, the resolution of all Disputes, excluding the subordination of courts of general jurisdiction, shall be submitted to the Permanent Arbitration Court of "Optimus Lex" SP Company (hereinafter also referred to as the "Arbitration Court"). The investigation of the case in the Arbitration Court will be carried out in accordance with the Law of the Republic of Armenia "On Commercial Arbitration" and the Regulations of the Arbitration Court. The parties assure that they are aware of the procedure for examining cases in the Arbitration Court. The regulations of the Arbitration Court are located on the Company's official website www.optimuslex.am. The parties stipulate that the Arbitral Tribunal shall be constituted in accordance with the Rules of the Court of Arbitration. The examination of disputes is carried out on the basis of written materials, without conducting an oral examination, except for the cases provided for by the "Regulations of the Arbitration Court" in accordance with the norms of substantive law of the Republic of Armenia. The language of the arbitration proceedings is Armenian, the place of arbitration is RA, c. Yerevan: that they

տրիբունալը ձևավորվում է Արբիտրաժային Դատարանի կանոնակարգին համապատասխան: Վեճերի քննությունն իրականացվում է գրավոր նյութերի հիման վրա՝ առանց բանավոր քննության անցկացման, բացառությամբ «Արբիտրաժային դատարանի կանոնակարգով» նախատեսված դեպքերի՝ ՀՀ նյութական իրավունքի նորմերին համապատասխան: Արբիտրաժային դատավարության լեզուն Հայերենն է, Արբիտրաժի վայրը՝ ՀՀ, ք. Երևանը:

are aware of the procedure for examining cases in the Court of Arbitration. The regulations of the Arbitration Court are located on the Company's official website www.optimuslex.am. The parties stipulate that the Arbitral Tribunal shall be constituted in accordance with the Rules of the Court of Arbitration. The examination of disputes is carried out on the basis of written materials, without conducting an oral examination, except for the cases provided for by the "Regulations of the Arbitration Court" in accordance with the norms of substantive law of the Republic of Armenia. The language of the arbitration proceedings is Armenian, the place of arbitration is RA, c. Yerevan: that they are aware of the procedure for examining cases in the Court of Arbitration. The regulations of the Arbitration Court are located on the Company's official website www.optimuslex.am. The parties stipulate that the Arbitral Tribunal shall be constituted in accordance with the Rules of the Court of Arbitration. The examination of disputes is carried out on the basis of written materials, without conducting an oral examination, except for the cases provided for by the "Regulations of the Arbitration Court" in accordance with the norms of substantive law of the Republic of Armenia. The language of the arbitration proceedings is Armenian, the place of arbitration is RA, c. Yerevan: The examination of disputes is carried out on the basis of written materials, without conducting an oral examination, except for the cases provided for by the "Regulations of the Arbitration Court" in accordance with the norms of substantive law of the Republic of Armenia. The language of the arbitration proceedings is Armenian, the place of arbitration is RA, c. Yerevan: The examination of disputes is carried out on the basis of written materials, without conducting an oral examination, except for the cases provided for by the "Regulations of the Arbitration Court" in accordance with the norms of substantive law of the Republic of Armenia. The language of the arbitration proceedings is Armenian, the place of arbitration is RA, c. Yerevan:

**36. ՀԱՄԱՁԱՅՆԱԳՐԻ ԼԵԶՈՒՆ**

Սույն Համաձայնագրի բնօրինակ լեզուն հայերենն է, սակայն այն կարող է թարգմանվել այլ լեզուներով: Այլ լեզուների հետ ցանկացած չհամապատասխանության դեպքում նախապատվության իրավունքը տրվում է հայերենին:

**37. ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ՀԵՏ ԿԱՊ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԻՋՈՑՆԵՐԸ և ՀԱՍՑԵՆԵՐԸ**

Հաճախորդը կարող է Ընկերության հետ կապ հաստատել հետևյալ հասցեների միջոցով.

Փոստային և փաստացի գործունեության հասցե.

Ֆրիդոմ Ֆինանս Արմենիա ՍՊԸ

Ք. Երևան, Մելիք Ադամյան փողոց 2/2, երկրորդ հարկ:

Հեռախոս +374 12 252 252

Էլ. հասցե՝ info@ffin.am

Վերկայք՝ www.ffin.am

**38. ՎԵՐԱՀՍԿՈՂ ՄԱՐՄԻՆ**

Ընկերությունը գործում է ՀՀ Կենտրոնական բանկի կողմից տրված ՆԸ0021 լիցենզիայի հիման վրա:

Կենտրոնական բանկի կոնտակտային տվյալները հետևյալն են.

Գործունեության վայրի հասցե.

Ք. Երևան, Վազգեն Սարգսյան 6

Հեռ. +374 10 592 697

Վերկայք՝ www.cba.am

**36. LANGUAGE OF AGREEMENT**

The original language of this Agreement is Armenian, but it may be translated into other languages. In case of any disagreement with other languages, the right of preference is given to Armenian.

**37. MEANS AND ADDRESSES FOR CONTACTING THE COMPANY**

The Client can contact the Company through the following addresses:

Postal and actual business address:

Freedom Finance Armenia LLC

C. Yerevan, Melik Adamyan Street 2/2, second floor.

Phone +374 12 252 252

E-mail: address:info@ffin.am:

Website:www.ffin.am

**38. CONTROLLING BODY**

The company operates on the basis of license HE0021 issued by the Central Bank of RA.

The contact details of the Central Bank are as follows:

Business address:

C. Yerevan 0010, Vazgen Sargsyan 6,

Tel. +374 10 592 697

Website:www.cba.am